նայն եղեն տեսողք մեծապայծառ ճառագայթիցն։ Զի մինչ ընդ երկինս ցոլացեալ էր մերձ առ տեղեաւն տաճարին Տեառն, ոչ միայն բնակչաց քաղաքին, այլ և շրջակայ համասփիւռ ամենայն գիւղից և քաղաքաց, արանց և կանանց, հովուաց ի լերինս և անդէորդաց ի փոսս, ճարտարողաց և արդիւնաւորաց ի դաշտս, որք աշխարհասէրք զպտուղն կապտէին, և բազում ճանապարհորդաց բացօթէից, ի հինգերորդում պահու գիշերոյն այդոքիկ ամենեքեան տեսանէին զարփիահրաշ սքանչելիսն և եկեալ բազում ճեպով ընդ այլ բազում տեսողսն՝ ահիւ քաջասլաց քայլարանաց խառն ի խուռն խմբելոցն հոյլք հոյլք ի հանդիսի բացարձակ տեսարանին լնուին զցանկութիւն փափագանացն, համբուրելով զսուրբ Խաչն Քրիստոսի։ Եւ ընկալեալ զշնորհս և զողորմութիւն ի նոյն ինքն տենչալի Զինէն զհանդերձեալ վայելուչ յաղթութեանն առեալ ընդունէին զպարգևս։ Եւ զի բազումք ի գլխաւորաց աշխարհիս ի կողմանց կողմանց եկեալ էին ի տօնն տէրունական Նշանին, վասն սաստիկ և ահեղ նշանացն, որք երևէին ի վերայ Խաչին, ոչ իշխէին զգիշերն ի յարկսն յայն մտանել կամ ի գաւթին օթել, այլ ելանէին արտաքս ի սարևանդակ վայրս և զգիշերն ամենայն աղօթէին մինչև ցառաւօտն»։

«Եւ ի ծագել արեգական մտանէին ի գաւիթ եկեղեցւոյն առաջի Խաչին ահիւ և երկիւղիւ, և իսկոյն յարեալ ի հսկումն Խաչապայծառ տօնին՝ կատարէին զդոհացողական պատարագն ի վերայ սեղանոյն։ Ապա յետ երևելոյ հրաշիցս այսոցիկ՝ վերստին ընձիւղեալ վերածաղկէր հզօրեղ Աստուածընկալ Խաչն աշտարակին մեծի, յոր դաւանել հաւատալ արժանաւորեցաք յԱստուծոյ, որ միշտ զմեօք պահպանութեամբ պարունակեալ զիւրոյ արարչութեան գործ խնամոց՝ անվթար տայ մեզ նեցուկ զփրկական կայմն, զպարզողն ի մեզ զաստուածգիտութեան առագաստ, ուր գիտութեանց դպրացն ջոկք և ուխտի մանկանց դասք արտաքս մնային, զի ի նոցանէ էր ծածկեալ խորհուրդն։ Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին այնորիկ, որ էր ի հին եկեղեցւոջն, զծագումն Խաչին, քաջայօժար կամաւ երթայր ի մեծ Կուենիցն գաւառն ի Գլխոյ վանաց եկե-